ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. հուլիսի 17-ին, N 307-Ա
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԿՈՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կոշի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Տոնոյանի 2023 թվականի հուլիսի 14-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. <<Կոշի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Տոնոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի հուլիսի 19-ից օգոստոսի 22-ը ներառյալ:
2. Ռուզաննա Տոնոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Կոշի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել <<Կոշի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչի օգնական Սոֆյա Մխիթարյանի վրա:
3. Ռուզաննա Տոնոյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 23-ից:

Ժամանակավոր պաշտոնակատար

Восстановимая подпись

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

Հ. ԳՈՒԼՅԱՆ